

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (գրադմունքի) անվանումը	Ռադիոհեռուստատեսային սարքավորումների վերանորոգող և սպասարկող ռադիոմեխանիկ
Դերը	Ռադիոմեխանիկը գնում է ռադիոընդունիչներ, հեռուստա ցույցեր, ձայնագրման, տեսագրման, վերարտադրման և համանման այլ սարքավորումները, բացահայտում և վերացնում է դրանց թերությունները, տեղադրում և կարգավորում է ալեհավաքներ, կատարում է նշված սարքերի տեխնիկական սպասարկումը:
Խնդիրների բնագավառ 1	Բացահայտել սարքավորումների անսարքությունների և թերությունների պատճառները
Աշխատանքային գործընթացը	Ռադիոտեխնիկը սարքավորման տիպին և տեսակին համապատասխան ուրվագծում է անսարքությունների ենթադրվող պատճառները, դրանցից յուրաքանչյուրի հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումները և մատնանշում անսարքության հիմնավոր պատճառը
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • սարքավորման տիպին և տեսակին համապատասխան նրա աշխատանքի առանցքային յուրահատկություններից առանձնացվում է • սարքավորման տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակը ուրվագծված է • անսարքության իրական պատճառները անսխալ ախտորոշված է
Խնդիրների բնագավառ 2	Պահպանելով սահմանված տեխնոլոգիան փոխել դետալները և հանգույցները
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը համաձայն կիրառվող տեխնոլոգիաների ապամոնտաժում և տարանջատում է շարքից դուրս եկած դետալները և հանգույցները, պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը և ռեժիմները տեղադրում է նորերը՝ կատարելով միջանկյալ չափումներ և ստուգումներ
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - դետալների ապամոնտաժումը կատարվում է նրանց համար սահմանված ռեժիմները պահպանելով - դետալների ապամոնտաժումը կատարվում է պահպանելով աշխատանքների հաջորդականությունը - դետալների ընտրության ժամանակ պահպանվել է նրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը - դետալների տեղադրման աշխատանքների հաջորդականությունը և ռեժիմները պահպանվում է - դետալների տեղադրման ճշգրտության ստուգումները կատարվում է
Խնդիրների բնագավառ 3	Ստուգել և փորձարկել վերանորոգված սարքավորումների աշխատանքը
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը ստուգում է վերանորոգված սարքավորման աշխատանքը շահագործման բոլոր ռեժիմներում
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - սարքավորումը շահագործման բոլոր ռեժիմներում նորմալ է աշխատում - ռեժիմների փոփոխությունների ընթացքում աշխատանքի շեղումներ չեն առաջանում
Խնդիրների բնագավառ 4	Տեղադրել և կարգավորել ալեհավաքների աշխատանքը
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը տեղադրում և համալարում է տարբեր սարքերի հետ օգտագործվող ալեհավաքները պահպանելով համապատասխան կանոնները: Ըստ անհրաժեշտության խորհրդատվություն է տրամադրում համապատասխան ալեհավաքի ընտրելու գործում

Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - ալեհավաքի տեղը ճիշտ է ընտրված - ալեհավաքի դիրքը ճիշտ է ընտրված - ալեհավաքի համակարգի միացումները ճիշտ են կատարված - շահագործման տարբեր ռեժիմներում ալեհավաք համակարգը ճիշտ է աշխատում
Խնդիրների բնագավառ 5	Ապահովել համատեղ աշխատող սարքերի աշխատանքի համադրելիությունը
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը հաշվի առնելով համատեղ աշխատող տարբեր սարքավորումների աշխատանքի ռեժիմները կարգավորում է նրանց աշխատանքը՝ նպատակ ունենալով ապահովել առավել որակյալ շահագործում
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - տարբեր սարքավորումների աշխատանքի ռեժիմների աշխատանքի պարամետրերը գնահատված է - ապահովված է սարքավորումների և համալարող սարքերի համատեղելիությունը շահագործման առումով
Խնդիրների բնագավառ 6	Կարգավորել սարքավորումների աշխատանքի օպտիմալ ռեժիմները
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը հաշվի առնելով սարքավորումների տարբեր հանգույցների աշխատանքի յուրահատկությունները՝ վերանորոգման աշխատանքներ կատարելիս ապահովում է նրանց աշխատանքի նպատակահարմար ռեժիմները: Անհրաժեշտության դեպքում նա լրացուցիչ փոփոխությունների միջոցով կարգավորում է այդ ռեժիմները
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - սարքավորման տարբեր հանգույցների աշխատանքը բնութագրող հիմնական չափանիշները ներկայացվում է - սահմանում է աշխատանքի օպտիմալ ռեժիմները - կատարում է աշխատանքի ռեժիմների կարգավորում
Խնդիրների բնագավառ 7	Խորհրդատվություն տրամադրվի օգտագործողներին
Աշխատանքային գործընթացը	Ռադիոմեխանիկը ռադիոհեռուստատեսային սարքավորումների շահագործողներին անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրում տարբեր սարքերի պահպանման, շահագործման, սպասարկման հարցերի վերաբերյալ
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - ըստ կոնկրետ պայմանների շահագործողները ստացել են օրյեկտիվ խորհրդատվություն - շահագործելը պարզագույն իրավիճակում կանխում է սարքերի շարքից դուրս գալը - սարքերը անխափան շահագործվում են
Պատասխատվությունը	Ռադիոմեխանիկը պատասխանատու է՝ <ul style="list-style-type: none"> - վերանորոգման աշխատանքները որակյալ կատարելու համար - նյութերը խնայողաբար օգտագործելու համար - ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար - աշխատանքների հետ կապված ծախսումները հաշվելու - վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար - անսարքությունները ճիշտ ախտորոշելու համար
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուներ	հայերեն - գերազանց մեկ օտար լեզու - բավարար
Համակարգիչ	MS Word - բավարար Internet Explorer՝ բավարար
Գիտելիքները	Էլեկտրատեխնիկայի հիմունքներ, ճարտարագիտական գրաֆիկա, վերանորոգման աշխատանքներում օգտագործվող նյութերի հատկությունները, ռադիոհեռուստատեսային սարքավորումների աշխատանքի

	<p>սկզբունքները, դետալների պարամետրերի բովանդակությունը</p>
<p>Կարողությունները և հմտություններ</p>	<ul style="list-style-type: none"> • անսարքությունների պատճառները բացահայտելու կարողություն • անհրաժեշտ դետալները ընտրելու կարողություն • սարքավորումներ օգտագործելու հմտություն • տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն • գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն • դետալները տեղադրելու և ապամոնտաժելու հմտություն • սարքավորումների աշխատանքը կարգավորելու կարողություն
<p>Վերաբերմունքը</p>	<p>Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորը ընկալող</p>